ԴՊՐՈՑԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Քոլեջը, լիցեյը և հետագա քայլերը

Միջին կուրսի երկրորդ տարին (CM2) ավարտելուց հետո Ձեր երեխան ընդունվում է Ձեր բնակավայրի քոլեջի 6-րդ դասարան:

Քոլեջում ուսուցումը տևում է չորս տարի: Վեցերորդ դասարանում ընդգծվում է անցումը դպրոցի և քոլեջի միջև, ամրապնդվում են տարրական դպրոցում ստացված գիտելիքները:

Հինգերորդ, չորրորդ և երրորդ դասարաններում աշակերտները խորացնում և ընդարձակում են իրենց գիտելիքները, կարողությունները և մշակույթը:

Ձեր երեխան հետևելու է դասացուցակին: Նա կունենա բազմաթիվ առարկաներ, դասախոսներ և դասասենյակներ: Նա դասերը կսկսի և կավարտի տարբեր ժամերի կախված օրերից: Նա պետք է ընտրի լրացուցիչ դասընթացներ կախված համացանցի, էկոլոգիայի կամ օրինակ օտար լեզուների հետ:

Ինչպես տարրական դպրոցում, այստեղ նույնպես երեխաները առողջապահության և քաղաքացիության վերաբերյալ գիտելիքներ են ստանում և բացահայտում են իրենց շրջապատող աշխարհը:

Քոլեջում նրանք սովորում են ձեռք բերել մասնագիտական կողմնորոշում՝ ընտրելով առարկաները և մասնագիտությունը:

Դասղեկը նա է, ում դուք կարող եք հանդիպել՝ ստուգելու Ձեր երեխայի կատարած աշխատանքն ու տեղեկանալու նրա վարքի մասին:

Կանոնավոր ստուգումները՝ նշումներով և գնահատականներով, իրականացվում են աշակերտների գիտելիքները ստուգելու համար: Դժվարությունների դեպքում նրան անհրաժեշտ օգնություն կցուցաբերվի:

Երրորդ դասարանում Ձեր երեխան հանձնում է առաջին քննությունը: Նա նաև իր մասնագիտական կողմնորոշման առաջին ընտրությունն է կատարում:

Քոլեջից հետո աշակերտները շարունակում են ուսումը լիցեյում կամ արհեստի ուսումնական կենտրոնում:

Հիմնական և տեխնոլոգիական լիցեյում Ձեր երեխան երեք տարի սովորելուց հետո կստանա ավարտական վկայական:

Երկրորդ դասարանում նա կրկին ուսումնասիրում է քոլեջում դասավանդված առարկաների մեծ մասը: Դասավանդվում են նաև այնպիսի հետազոտական առարկաներ, ինչպիսիք են օրինակ՝ տնտեսագիտությունը, կառավարումը և բիոտեխնոլոգիան: Դրանք կօգնեն Ձեր երեխային մասնագիտական կողմնորոշման ընտրության հարցում՝ առաջին, այնուհետև՝ ավարտական դասարանում ուսումը շարունակելու հա՝մար, որտեղից նա կուղղորդվի դեպի տարբեր մասնագիտական բարձրագույն դպրոցներ՝ գիտությունների, տեխնոլոգիայի, գրականության, արվեստի և այլ ուղղություններ: Ուսման տևողությունը 2-8 տարի կամ ավելի է՝ կախված տրվելիք վկայականից:

Մասնագիտական լիցեյում և արհեստի ուսումնական կենտրոնում Ձեր երեխան կարող է ձեռք բերել Մասնագիտական ընդունակությունների վկայական (CAP)՝ երկու տարվա ուսումնառությունից հետո կամ Մասնագիտական բակալավրի վկայական՝ երեք տարի անց: Այնտեղ նա մասնագիտություն ձեռք կբերի:

Մասնագիտական լիցեյում նա կմասնակցի որոշակի կուրսերի և փորձաշրջաններ կանցնի մասնագիտական միջավայրում:

Արհեստի ուսումնական կենտրոնում նա ավելի հաճախ կլինի ձեռնարկություններում և աշխատավարձ կստանա:

Մասնագիտական ընդունակությունների վկայականը և մասնագիտական բակալավրը աշխատանք ունենալու հնարավորություն են տալիս, բայց ուսման շարունակությունը նույնպես հնարավոր է:

Լինելով Ձեր երեխայի կողքին՝ կքաջալերեք նրան և կուղեկցեք իր ուսման ողջ ընթացքում, որպեսզի նա կառուցի անձնական և մասնագիտական ապագա: